

2005թ. ՀՀ ԱՎԾ կողմից միջազգային համագործակցության շրջանակում իրականացված ծրագրերը

<i>Ծրագրի անվանումը</i>	<i>Իրականացման գործընթացը</i>
SUSA-Վիճակագրություն 6	Ծրագրով նախատեսված (123500 եվրո կամ ճշտված նախահաշվով՝ 78152.5հազ.դրամ) միջոցառումներն ամբողջությամբ կատարված են 2004թ. վերջի դրությամբ: ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից 2004թ.-ին ընդհանուր առմամբ ծախսվել է 76902.5 հազ.դրամ: 2005թ. ծախսվել է 1250.0հազ. դրամ: Ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է:
UNFPA-Հայաստանում կանանց, տղամարդկանց և երիտասարդների վերարտադրողական առողջության քարտեզավման ծրագիր	Ծրագրով 2004թ. միջոցառումների իրականացման համար ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից նախատեսված 15831.0 հազ. դրամի դիմաց 2004թ.-ին ծախսվել է 12606.075 հազ.դրամ, 2005թ.` 3224.9հազ. դրամ: Ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է:
SIDA-Ժամանակի օգտագործման վիճակագրություն	Շվեդական միջազգային զարգացման գործակալության (ՄԻԴԱ) ֆինանսավորմամբ իրականացվել են «Ժամանակի օգտագործման հետազոտություն» նախագծի աշխատանքները: Այս նախագծի գծով նախատեսված 3122.1 հազ. դրամի դիմաց ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից իրականացված ծախսերը 2004 թ. կազմել են 2848.7 հազ. դրամ, 2005թ.-ին ` 273.4հազ.դրամ: Ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է:
SIDA- շրջակա միջավայրի վիճակագրություն	Շվեդական միջազգային զարգացման գործակալության (ՄԻԴԱ) ֆինանսավորմամբ իրականացվել են «Շրջակա միջավայրի վիճակագրություն» նախագծի աշխատանքները, որի գծով նախատեսված 1683.4 հազ. դրամի դիմաց ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից իրականացված ծախսերը 2004թ. կազմել են 1619.2 հազ. դրամ, 2005թ.` 63.9 հազ.դրամ: Ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է: